ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԱԶԱՏԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2019 թվական N 30-Ա

## ԱԶԱՏԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-Ի ԹԻՎ 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14 -րդ հոդվածի 6-րդ կետի պահանջով Ազատամուտ համայնքի ավագանին **որոշում է՝**

Հաստատել Ազատամուտ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի **16**-ի թիվ 8 արտահերթ նիստի օրակարգը.

1.Ազատամուտ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:

2.Ազատամուտ համայնքի 2020 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին,

3.Ազատամուտի համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին,

4.Միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծում ներառված Ազատամուտ համայնքի գլխավոր հատակագիծը հաստատելու մասին,

5.Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Ազատամուտ համայնքի ավագանու կողմից Հայաստանի Հանրապետության կառավարությանն ուղղված ուղերձի ընդունման մասին:

(ԿՈՂՄ 7) (ԴԵՄ 0) (ՁԵՌՆՊԱՀ 0)

ԼՈՒՍԻՆԵ ՄԱՏԻՆՅԱՆ

ՎՈԼՈԴՅԱ ԲԱԼԱՍՅԱՆ

ՄԱՐՏԻԿ ԱՅՎԱԶՅԱՆ

ԱԼԻԿ ԷԼԱՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՆԱԶԱՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԲԵԳԻՆՅԱՆ

ԽԱԼԱԹ ՊԱՊՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԱԶԱՏԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ
16 դեկտեմբերի 2019 թվական N 31-Ն

ԱԶԱՏԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 5-րդ կետի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով Ազատամուտ համայնքի ավագանին որոշում է՝

1.Ազատամուտ համայնքի 2019 թվականի տարեկան բյուջեի եկամտային մասում կատարել փոփոխություն, նախատեսել ՀՀ պետական բյուջեից տրվող կապիտալ սուբվենցիա բաժնում 9180000 դրամ, ծախսը նախատեսել 6.6 հատվածի 5113 հոդվածի 9180000 դրամ:
2.Ազատամուտ համայնքի վարչական բյուջեի եկամտային մասում ՀՀ պետբյուջեից տրվող ընթացիկ ծախսերի համար ավելացնել 3000000 դրամ /զբաղվածության ծառայություններ բաժնում/: Ծախսը նախատեսել 10.5 հատվածի 4111 հոդվածի 2400000 դրամ, 4269 հոդվածին՝ 399998 դրամ, 4264 հոդվածին 200002 դրամ:
3.Տեղական վճարներ բաժնում /հատված 46.08/ Արվեստի դպրոց հաճախող երեխաների վարձավճարից առաջացած գումարը ավելացնել 310000 դրամով և կարդալ 1235000 դրամ:
4. Տեղական վճարներ բաժնում /հատված 46.07/ մանկապարտեզ հաճախող երեխաների վարձավճարից առաջացած գումարը կրճատել 332900 դրամով և կարդալ 2367100 դրամ:
5.Ոչ գյուղատնտեսական նշանակության հողի վարձավճարը պլանավորված 16000 դրամի փոխարեն կարդալ 27900 դրամ/հատված 9.2/:

6.Կրճատել 1.1 հատվածի 4111 հոդվածի 480000 դրամը և կարդալ 15535000 դրամ, 4221 հոդվածի 92800 դրամը և կարդալ 7200 դրամ, 4264 հոդվածի 307200 դրամը և կարդալ 697800 դրամ, 1.6 հատվածի 4237 հոդվածի 11000 դրամը և կարդալ 489000 դրամ, 8.6 հատվածի 4267 հոդվածի 100000 դրամը և կարդալ 500000 դրամ, 9.5 հատվածի 4511 հոդվածի 511000 դրամը և կարդալ 10914000 դրամ:

7.Ավելացված գումարը ավելացնել 8.2 հատվածի 4511 հոդվածի և կարդալ 6126000 դրամ, 5.1 հատվածի 4511 հոդվածին և կարդալ 12630000 դրամ:

(ԿՈՂՄ 7) (ԴԵՄ 0) (ՁԵՌՆՊԱՀ 0)

ԼՈՒՍԻՆԵ ՄԱՏԻՆՅԱՆ

ՎՈԼՈԴՅԱ ԲԱԼԱՍՅԱՆ

ՄԱՐՏԻԿ ԱՅՎԱԶՅԱՆ

ԱԼԻԿ ԷԼԱՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՆԱԶԱՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԲԵԳԻՆՅԱՆ

ԽԱԼԱԹ ՊԱՊՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԱԶԱՏԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

---

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 դեկտեմբերի 2019 թվական N 32-Ն

## ԱԶԱՏԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 18 և 19 կետերի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 7-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ հոդվածների, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Ազատամուտ համայնքի ավագանին որոշում է՝

Ազատամուտ համայնքում 2020 թվականի համար սահմանել տեղական տուրքեր և վճարներ հետևյալ դրույքաչափերով.

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչեւ 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական եւ արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ չորս հազար հինգ հարյուր դրամ,

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի եւ շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ինը հազար դրամ,

-500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ տասնհինգ հազար դրամ,

- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ երեսուն հազար դրամ.

գ. ոչ հիմնական շենքերի եւ շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ ինը հարյուր դրամ,
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ հազար հինգ հարյուր դրամ.

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ ինը հարյուր դրամ,

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հոդվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների եւ քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդմանթույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ հազար հինգ հարյուր դրամ.

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ և բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում, բացառությամբ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների կողեզրում՝ հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հարյուր հազար դրամ.

6) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսան հազար դրամ.

7) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած ցանկում ընդգրկված սահմանամերձ եւ բարձրլեռնային համայնքների վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առեւտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ քսան հազար դրամ.

8) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ;

4.Համայնքի տարածքում տեղական տուրքը սահմանվում է՝

1) ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. Մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10500 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13500 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20500 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25500 դրամ,

զ. 501 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45500 դրամ:

2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

ա. Մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 2000 դրամ,

բ. 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 10500 դրամ,

գ. 51-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 13500 դրամ,

դ. 101-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 20500 դրամ,

ե. 201-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 25500 դրամ,

զ. 501 եւ ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ 45500 դրամ:

5. իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ երեք հարյուր հիսուն դրամ՝ մեկ քառակուսի մետրի համար.

6. համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24:00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝
ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ
բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ քսանհինգ հազար դրամ
գ. բաղնիքների (սաունաների) համար՝ երկու հարյուր հազար դրամ
դ. խաղատների համար՝ հինգ հարյուր հազար դրամ
ե. շահումով խաղերի համար՝ երկու հարյուր հիսուն հազար դրամ
զ. վիճակախաղերի համար՝ հարյուր հազար դրամ
7.Համայնքի տարածքում յուրաքանչյուր ամսվա համար արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար յուրաքանչյուր 1 քառակուսի մետրի տեղական տուրքը սահմանվում է՝
1) ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 2000 դրամ,
2) թունդ ալկոհոլային /սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս/ արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ 3500 դրամ,
3) այլ արտաքին գովազդի համար՝ 1500 դրամ,
4) դատարկ գովազդային վահանակների համար՝ 700 դրամ,
5) «Թանկարժեք մետաղների մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան համայնքի տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար տեղական տուրքը սահմանել յուրաքանչյուր տարվա համար՝ 50000 դրամ:
8. Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար տեղական տուրքը ընթացիկ տարվա համար սահմանվում է 1000 դրամ:
9. Համայնքի տարածքում մարդատար տաքսու /բացառությամբ երթուղային տաքսիների/ ծառայություն իրականացնելու թույլտվության համար տեղական տուրքը ընթացիկ տարում յուրաքանչյուր մեքենայի համար սահմանվում է՝ 10000 դրամ:

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

10.Համայնքի տարածքում շինարարության կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու, ավարտված շինարարության շահագործումը փաստարկելու համար տեղական ինքնակառավարման մարմնի մնացած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 2000 դրամ:
11.Տեղական ինքնակառավարման մարմինների տնօրինության և օգտագործման տակ գտնվողհողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալությկյան տրամադրելու դեպքում անհրաժեշտ չափագրման և այլ նման աշխատանքների համր տեղական ինքնակառավարման մարմնի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար սահմանել՝ 2000 դրամ:
12.Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մրցույթներ և աճուրդներ կազմակերպելու հետ կապված ծախսերի փոխհատուցման համար՝ մասնակիցների վճար սահմանել՝ 2000 դրամ:

13.Ազատամուտի մանկապարտեզի ծնողական վճարի չափը սահմանել յուրաքանչյուր երեխայի համար ամսական 4000 ՀՀ դրամ:
14.Ազատամուտի արվեստի դպրոցում ուսման վճարի չափը յուրաքանչյուր ամսվա համար սահմանել 4000 ՀՀ դրամ:
15.Ազատամուտ համայնքի կողմից մատուցվող աղբահանության ծառայությունների դիմաց գանձվող վճարի չափը սահմանել 1 շնչի համար ամսական 100 դրամ:
16.Առևտրի /այդ թվում շուկաների/, հանրային սննդի և բնակչության սպասարկման այլ ծառայություններ-35 դրամ 1քմ-ի համար:
17.Հյուրանոցներ և հյուրանոցային ծառայություններ – 15 դրամ 1քմ-ի համար:
18.Արտադրական, արդյունաբերական և գրասենյակային նշանակության շինություններ-6 դրամ 1քմ-ի համար:
19.Կրթական, մշակութային, առողջապահական, սպորտային, գիտահետազոտական շինություններ -3 դրամ 1քմ-ի համար:

2.Ուժը կորցրած ճանաչել Ազատամուտ համայնքի ավագանու 20.12.2018թ. «Ազատամուտ համայնքի 2019 թվականի տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 9-Ն որոշումը:

(ԿՈՂՄ 6) (ԴԵՄ 0) (ՁԵՌՆՊԱՀ 1)

ԼՈՒՍԻՆԵ ՄԱՏԻՆՅԱՆ ԱԼԻԿ ԷԼԱՐՅԱՆ
ՎՈԼՈԴՅԱ ԲԱԼԱՍՅԱՆ
ՄԱՐՏԻԿ ԱՅՎԱԶՅԱՆ
ԱՐՄԱՆ ՆԱԶԱՐՅԱՆ
ԱՐԹՈՒՐ ԲԵԳԻՆՅԱՆ
ԽԱԼԱԹ ՊԱՊՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԱԶԱՏԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2019 թվական N 33-Ա

## ԱԶԱՏԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 11-րդ, 28-րդ կետերի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Ազատամուտ համայնքի ավագանին **որոշում է՝**

1.Հաստատել Ազատամուտի համայնքապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված 1-ի:
2.Հաստատել «Ազատամուտի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված 2-ի:
3.Հաստատել «Ազատամուտ համայնքի ակումբ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված 3-ի:
4.Հաստատել «Ազատամուտի համայնքային կոմունալ ծառայություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված 4-ի:
5.Հաստատել ՀՀ Տավուշի մարզի «Ազատամուտ համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը համաձայն հավելված 5-ի:
6.Ուժը կորցրած ճանաչել Ազատամուտ համայնքի ավագանու 20.12.2018թ. «Ազատամուտի համայնքապետարանի աշխատակազմի և համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N 11-Ա, 28.08.2019թ. «ՀՀ Տավուշի մարզի «Ազատամուտ համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային

կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N20-Ա և 28.10.2019թ. «Ազատամուտի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N24-Ա որոշումները:

7.Սույն որոշումը տարածվում է 2020 թվականի հունվարի 1-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

| | | |
|---|---|---|
| (ԿՈՂՄ 6) | (ԴԵՄ 0) | (ՁԵՌՆՊԱՀ 1) |
| ԼՈՒՍԻՆԵ ՄԱՏԻՆՅԱՆ | | ԽԱԼԱԹ ՊԱՊՅԱՆ |
| ՎՈԼՈԴՅԱ ԲԱԼԱՍՅԱՆ | | |
| ՄԱՐՏԻԿ ԱՅՎԱԶՅԱՆ | | |
| ԱԼԻԿ ԷԼԱՐՅԱՆ | | |
| ԱՐՄԱՆ ՆԱԶԱՐՅԱՆ | | |
| ԱՐԹՈՒՐ ԲԵԳԻՆՅԱՆ | | |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՎԱՀԱԳՆ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Հավելված 1
Ազատամուտ համայնքի ավագանու
16.12.2019թ. N 33-Ա որոշման

## ԱԶԱՏԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 10
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| h/h | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (դրամ) | __% հավելավճար * ( դրամ ) | Ամսական աշխատավարձ (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Համայնքի ղեկավար | 1 | 340000 | | 340000 |
| | Հայեցողական պաշտոններ | | | | |
| 2 | Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 220000 | | 220000 |
| 3 | Համայնքի ղեկավարի օգնական | 1 | 170000 | | 170000 |
| 4 | Գործավար | 1 | 89620 | 2998 | 92618 |
| | Համայնքային ծառայողներ | | | | |
| 5 | Աշխատակազմի քարտուղար 1.2-1 | 1 | 260000 | | 260000 |
| 6 | Աշխատակազմի առաջատար մասնագետ 3.1-1 | 1 | 205000 | | 205000 |
| 7 | Աշխատակազմի առաջատար մասնագետ 3.1-2 | 1 | 205000 | | 205000 |
| 8 | Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ 3.2-1 | 1 | 95000 | | 95000 |
| 9 | Աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ 3.3-1 | 1 | 89620 | 2998 | 92618 |
| 10 | Աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ 3.3-2 | 1 | 89620 | 2998 | 92618 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՍԵՎԱԴԱ ԲԱԼԱՍՅԱՆ

Հավելված 2
Ազատամուտ համայնքի ավագանու
16.12.2019թ. N 33-Ա որոշման

«ԱԶԱՏԱՄՈՒՏԻ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 21
2.«Ազատամուտի արվեստի դպրոց» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (դրամ) | ___% հավելա-վճար* ( դրամ ) | Ամսական աշխատավարձ (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 93000 | | 93000 |
| 2 | Ուսմասվար | 1 | 89620 | 2998 | 92618 |
| 3 | Հաշվապահ | 1 | 89620 | 2998 | 92618 |
| 4 | Գանձապահ | 1 | 89620 | 2998 | 92618 |
| 5 | Ուսուցիչ | 13 | 88320 | 26982 | 1192042 |
| 6 | Քարտուղարուհի | 1 | 89620 | 2998 | 92618 |
| 7 | Գործավար | 1 | 89620 | | 89620 |
| 8 | Տնտեսվար | 1 | 89620 | 2998 | 92618 |
| 9 | Հավաքարար | 1 | 89620 | 2998 | 92618 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԵՎԱԴԱ ԲԱԼԱՍՅԱՆ

Հավելված 3
Ազատամուտ համայնքի ավագանու
16.12.2019թ. N 33-Ա որոշման

«ԱԶԱՏԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՈՒՄԲ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 11
2.«Ազատամուտ համայնքի ակումբ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (դրամ) | ___% հավելավճար* ( դրամ ) | Ամսական աշխատավարձ (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 93000 | | 93000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 89620 | | 89620 |
| 3 | Գործավար | 1 | 89620 | 2998 | 92618 |
| 4 | Գրադարանավար | 1 | 89620 | | 89620 |
| 5 | Համակարգող | 1 | 89620 | 2998 | 92618 |
| 6 | Կրտսեր մասնագետ | 1 | 89620 | 2998 | 92618 |
| 7 | Մարզական գծով մասնագետ | 1 | 89620 | 2998 | 92618 |
| 8 | Հավաքարար | 1 | 89620 | | 89620 |
| 9 | Հսկիչ | 1 | 89620 | | 89620 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԵՎԱԴԱ ԲԱԼԱՍՅԱՆ

Հավելված 4
Ազատամուտ համայնքի ավագանու
16.12.2019թ. N 33-Ա որոշման

«ԱԶԱՏԱՄՈՒՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿՈՄՈՒՆԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1.Աշխատակիցների թվաքանակը՝ 13
2.«Ազատամուտի համայնքային կոմունալ ծառայություն» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| h/h | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (դրամ) | ___% հավելավճար (դրամ) | Ամսական աշխատավարձ (դրամ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 110000 | | 110000 |
| 2 | Հաշվապահ | 1 | 89620 | | 89620 |
| 3 | Վարորդ | 2 | 93000 | | 186000 |
| 4 | Հարկահավաք | 1 | 89620 | | 89620 |
| 5 | Բանվոր | 6 | 89620 | 2998 | 540718 |
| 6 | Հավաքարար | 2 | 89620 | | 179240 |
| | | | | | |
| | | | | | |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՍԵՎԱԴԱ ԲԱԼԱՍՅԱՆ

Հավելված 5
Ազատամուտ համայնքի ավագանու
16.12.2019թ. N 33-Ա որոշման

ՀՀ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ «ԱԶԱՏԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀՈԱԿ-Ի ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 33

2.ՀՀ Տավուշի մարզի «Ազատամուտ համայնքի մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը

| հ/հ | Հաստիքի անվանումը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը (դրամ) | ___% հավելավճար (դրամ) | Ամսական աշխատավարձ (դրամ ) |
|---|---|---|---|---|---|
| 1 | Տնօրեն | 1 | 133000 | | 133000 |
| 2 | Մեթոդիստ ուս.գծով | 1 | 89620 | 2998 | 92618 |
| 3 | Հաշվապահ | 1 | 89620 | 2998 | 92618 |
| 4 | Օպերատոր | 1 | 89620 | 2998 | 92618 |
| 5 | Բուժքույր | 1 | 89620 | 2998 | 92618 |
| 6 | Դաստիարակ | 3 | 89620 | 2998 | 277854 |
| 7 | Դայակ | 3 | 89620 | 2998 | 277854 |
| 8 | Լոգոպետ | 1 | 89620 | 2998 | 92618 |
| 9 | Հոգեբան | 1 | 89620 | 2998 | 92618 |
| 10 | Երաժշ. ղեկ. | 1 | 89620 | 2998 | 92618 |
| 11 | Ֆիզկուլտ. հրահանգիչ | 1 | 89620 | 2998 | 92618 |
| 12 | Պարուսույց | 1 | 89620 | 2998 | 92618 |
| 13 | Խոհարար | 1 | 89620 | 2998 | 92618 |
| 14 | Խոհարարի օգնական | 1 | 89620 | 2998 | 92618 |
| 15 | Տնտեսվար | 1 | 89620 | 2998 | 92618 |
| 16 | Լվացարար-դերձակ | 1 | 89620 | 2998 | 92618 |
| 17 | Հավաքարար | 1 | 89620 | | 89620 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՍԵՎԱԴԱ ԲԱԼԱՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶ ԱԶԱՏԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 դեկտեմբերի 2019 թվական N 34-Ա

## ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԱԶԱՏԱՄՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **18**-րդ հոդվածի 29-րդ կետի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 54-րդ կետը Ազատամուտ համայնքի ավագանին **որոշում է՝**

1.Հաստատել միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծում ներառված Ազատամուտ համայնքի գլխավոր հատակագիծը:

(ԿՈՂՄ 7) (ԴԵՄ 0) (ՁԵՌՆՊԱՀ 0)

ԼՈՒՍԻՆԵ ՄԱՏԻՆՅԱՆ

ՎՈԼՈԴՅԱ ԲԱԼԱՍՅԱՆ

ՄԱՐՏԻԿ ԱՅՎԱԶՅԱՆ

ԱԼԻԿ ԷԼԱՐՅԱՆ

ԱՐՄԱՆ ՆԱԶԱՐՅԱՆ

ԱՐԹՈՒՐ ԲԵԳԻՆՅԱՆ

ԽԱԼԱԹ ՊԱՊՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱԼԱՎԵՐԴՅԱՆ